ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հ. Խ. ԿԱՐՃԻԿՅԱՆ

Վերարտադրությունը սոցիալիստական գյուղատնտեսության մեջ, լինելով միասնական տնտեսական սիստեմի առանձին օղակը, ունի իր առանձնահատկությունները, որոնք կախված են ինչպես հասարակական հարաբերություններից, այնպես էլ բնակլիմայական գործոններից ու արտադրության բնույթից։ Վ. Ի. Լենինը գրում էր, որ «կան հողագործության առանձնահատկություններ, որոնք բացարձակապես անվերացնելի են... Այս առանձնահատկությունների հետևանքով մեքենային խոշոր ինդուստրիան հողագործության մեջ երբեք աչքի չի ընկնի այն բոլոր գծերով, որ նա ունի արդյունաբերության մեջ»[1]։

Սոցիալիստական գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրության պրոբլեմի հիմնական հարցերից է գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործումը։ Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավումը պետք է նպաստի այն մեծ խնդիրների լուծմանը, որոնք կանգնած են Սովետական Միության գյուղատնտեսության առջև։

Գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործում այս կամ այն չափով տեղի է ունեցել նաև մինչսոցիալիստական հասարակարգում։ Այն տեղի է ունենում նաև ներկայումս, կապիտալիստական հասարակարգում, տնտեսության առանձին ճյուղերի անհամաչափ զարգացման պայմաններում։

Վ. Ի. Լենինը ագրարային հարցին նվիրված իր աշխատություններում բազմիցս անդրադարձել է գյուղատնտեսության մեջ վերարտադրության հարցերին։ Բնորոշելով գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները կապիտալիզմի օրոք, Վ. Ի. Լենինը գրում էր, որ «...կապիտալիստական հողագործությունը յուրաքանչյուր առանձին դեպքում... դառնում է ավելի միատեսակ, ավելի միակողմանի նախկինի համեմատությամբ, բայց և ընդհանրապես ու ամբողջությամբ առած անչափ ավելի բազմակողմանի ու ռացիոնալ է դառնում, քան նահապետական հողագործությունը»[2]։

Այսպիսով, կապիտալիզմի պայմաններում գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործումը, իր բոլոր թերություններով հանդերձ, արտահայտվում է նրանում, որ այն ընդհանրապես և ամբողջությամբ վերցրած դառնում է անհամեմատ ավելի բազմատեսակ ու ռացիոնալ, քան կապիտալիզմին նախորդած հասարակարգի՝ ֆեոդալիզմի պայմաններում։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 183։

2 Նույն տեղում, հ. 3, էջ 391 (ընդգծումը մերն է — Հ. Կ.)։

Գյուղատնտեսական արտադրության կառուցվածքի կատարելագործումը անքակտելիորեն կապված է նրա համամասնական զարգացման հետ, որն ապահովում է գյուղատնտեսության մեջ ամենանպաստավոր, տնտեսապես ռացիոնալ ճյուղային կառուցվածք։

Տնտեսական զարգացման համամասնությունները ենթարկվում են այն օրինաչափություններին, որոնք բնորոշ են նյութական արտադրության զարգացման տարբեր շրջաններին։ Բավական է հիշել Կ. Մարքսի հայտնի խոսքերը այն մասին, որ «Հասարակական աշխատանքի՝ որոշ համամասնություններով բաշխման անհրաժեշտությունը ոչ մի կերպ չի կարող ոչնչացվել հասարակական արտադրության որոշ ձևով։ Փոխվել կարող է միայն նրա արտահայտության ձևը»[3]։

Համամասնական զարգացումը հատուկ է նաև կապիտալիստական հասարակարգին։ Բայց դա ձևավորվում է տարերայնորեն, մրցակցության մեխանիզմի միջոցով, համամասնությունների մշտական խախտման ընթացքում, ընդհատումներով։

Սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը զարգանում է առանց ճգնաժամերի, պլանաչափորեն։ Դա ապահովում է սոցիալիստական արտադրության արագ զարգացումը և տնտեսության կառուցվածքի անընդհատ կատարելագործումը. սակայն Սովետական Միությունում ևս, ժողովրդական տնտեսության զարգացման ընթացքում, դրսևորվել են որոշ անհամամասնություններ՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության, արտադրության առաջին և երկրորդ ստորաբաժանումների, դրանց ճյուղերի, ինչպես նաև գյուղատնտեսության տարբեր ճյուղերի միջև։ Բայց դրանք առաջացել են ոչ որպես արտադրության տարերային զարգացման հետևանք, այլ, ամենից առաջ, որպես պետության կողմից տարվող տնտեսական քաղաքականության հետևանք։

Գյուղատնտեսության զարգացման խիստ ետ մնալու հետևանքով լուրջ անհամամասնություններ առաջացան յոթնամյակի տարիներին։ Նկատվեց գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնապահության միջև առաջացած անհամամասնությունների խորացում, որն արտահայտվեց անասունների գլխաքանակի աճի համեմատությամբ կերային բազայի ետ մնալու և վերջինի ոչ ռացիոնալ կառուցվածքի մեջ։ Այսպես. ՍՍՀՄ-ում 1959—1964 թթ. անասունների կերի (չհաշված արոտայինը) ամբողջ ծախսը (կերային միավորներով) տնտեսությունների բոլոր կատեգորիաներում կրճատվեց մոտավորապես 12 տոկոսով, այն դեպքում, երբ նույն ժամանակամիջոցում միայն խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացավ 17,5, իսկ կովերինը՝ 14,4 տոկոսով[4]։

Հենվելով ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965) պլենումի որոշումների վրա, նոր հնգամյակի համար մշակվեց գյուղատնտեսության արտադրության զարգացմանը և այդ ճյուղի անհամամասնությունների հաղթահարմանն ուղղված տնտեսական միջոցառումների մի ամբողջ սիստեմ։ Դրանց իրագործումը զգալի բեկում մտցրեց արտադրական կառուցվածքի բարելավման, վերարտադրության տեմպերի արագացման և գյուղատնտեսության ինտենսիվացման գործում։ Զգալիորեն ավելացավ մեքենայական տեխնիկայի ու հանքային պա-

[3] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 32, стр. 460—461.

[4] «Народное хозяйство СССР в 1961 г.», стр. 411; «Народное хозяйство СССР в 1965 г.», стр. 367, 392.

բարտանությունների մատակարարումը։ Ցանքատարածությունների կառուցվածքի կատարելագործման շնորհիվ ավելացավ նաև անասնապահության համար կերերի արտադրությունը։

Գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրության ընդհանուր պրոբլեմի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման ու տեղաբաշխման հարցերը։ Գյուղատնտեսության արդյունավետ մասնագիտացման և ռացիոնալ տեղաբաշխման իրագործումն առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրները լուծելու, այն է՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ըստ ամենայնի ավելացնելու, գլխավոր պայմաններից մեկն է։

Սոցիալիստական գյուղատնտեսության մասնագիտացումն արտահայտվում է աշխատանքի հասարակական բաժանման մեջ։ Նրանում իրենց արտացոլումն են գտնում գյուղատնտեսական ամեն մի ճեռնարկության, ամբողջ շրջանների, տնտեսական գոտիների ու հանրապետությունների արտադրական ուղղությունը ու ճյուղային կառուցվածքը։ Գյուղատնտեսության մասնագիտացման խորացումն ու ռացիոնալ տեղաբաշխումը՝ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործման պրոցեսներ են։ Նրանք պետք է օպտիմալ համամասնություններ ապահովեն առանձին ճյուղերի միջև։

Գյուղատնտեսության մասնագիտացումն սկիզբ է առել ապրանքային արտադրության ծագման ու զարգացման, կապիտալիզմի առաջացման, արդյունաբերության մեջ մասնագիտացումը խորանալու հետ միաժամանակ։ Այն սերտորեն կապված է գյուղատնտեսության արտադրության առանձնահատկությունների հետ, որոնք մեծ չափով կախված են երկրի աշխարհագրական գիրքից ու բնակլիմայական պայմաններից, որոնք նպաստում են նպատակասլաց ձևով օգտագործելու հողային, ջրային, աշխատանքային և նյութական ռեսուրսները, խորացնելու մասնագիտացումը և միաժամանակ զուգակցելու փոխադարձաբար կապված և իրար լրացնող արտադրաճյուղերը։ Հենց դա էլ պայմանավորում է մասնագիտացման բնույթի ու ձևերի տարբերությունը արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ։ Այդ տարբերության մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Մշակող արդյունաբերությունը բաժանվում է առանձին, միանգամայն ինքնուրույն ճյուղերի, որոնք բացառապես նվիրված են մեկ պրոդուկտի կամ նրա մեկ մասի արտադրությանը։ Իսկ հողագործական արդյունաբերությունը չի բաժանվում միանգամայն առանձին ճյուղերի, այլ միայն մասնագիտանում է մի դեպքում շուկայական մեկ պրոդուկտի, մյուս դեպքում՝ շուկայական մի այլ պրոդուկտի արտադրության մեջ, ընդ որում գյուղատնտեսության մնացած կողմերը հարմարվում են այդ գլխավոր (այսինքն շուկայական) պրոդուկտին»[5]։

Գյուղատնտեսության արտադրության բնորոշ առանձնահատկությունը, ինչպես մատնանշվեց, նրա կախվածությունն է տեղական բնական պայմաններից։ Վ. Ի. Լենինը բազմիցս մատնանշել է պլանային և գյուղատնտեսական օրգանների կողմից Ռուսաստանի տարբեր մարզերի ու շրջանների բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը։ «Բոլոր այս հարցերում տեղական առանձնահատկությունները հաշվի չառնել,— գրում էր Վ. Ի. Լենինը,— նշանակում է ընկնել բյուրոկրատական

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 386—387։

ցենտրալիզմի մեջ և այլն, նշանակում է աշխատողներին խանգարել տեղական այն առանձնահատկությունները հաշվի առնելու մեջ, որոնք հանդիսանում են մտածված աշխատանքի հիմքը»[6]։

Արտադրության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը անքակտելիորեն կապված է գյուղատնտեսության ինտենսիվացման հետ։ Ինտենսիվացման մակարդակի բարձրացումն զգալի չափով բնորոշում է գյուղատնտեսության մասնագիտացման խորացման ու ճյուղային կառուցվածքի կատարելագործման հնարավորությունները։ Վերջինս, որպես կանոն, կախված է գյուղատնտեսության նյութատեխնիկական հագեցվածության աՃից, մեքենայացման, ոռոգման մակարդակից, հանքային պարարտանյութերի առկայությունից և, հետևապես, զգալի մեծության լրացուցիչ կապիտալ ներդրումներից, այսինքն, այն պայմաններից, որոնք և բնորոշում են գյուղատնտեսության ինտենսիվացման հասկացողությունը։ Վ. Ի. Լենինը հետևյալ կերպ է բնութագրել գյուղատնտեսության ինտենսիվացումը. «Այստեղ գյուղատնտեսությունը զարգանում է գլխավորապես ինտենսիվորեն, ոչ թե մշակելի հողի քանակի մեծացման միջոցով, այլ մշակման որակի բարելավման միջոցով, հողի նախկին քանակի մեջ ներդրվող կապիտալի չափերի մեծացման միջոցով»[7]։ Եվ «դա նշանակում է տեխնիկական փոփոխություններ հողագործության մեջ, նրա ինտենսիֆիկացիան, դաշտամշակության բարձրագույն սիստեմներին անցնելը, արհեստական պարարտանյութերի ուժեղացրած գործածություն, գործիքների և մեքենաների բարելավում...»[8]։

Այսպիսով, գյուղատնտեսական արտադրանքի ճյուղային կառուցվածքի բարելավումը պետք է կատարվի տեխնիկական պրոգրեսի, նյութա-տեխնիկական բազայի բարելավման, կապիտալ ներդրումների աՃի հիման վրա։ Ինտենսիվացման մակարդակի բարձրացումն իր հերթին պետք է հանգեցնի հողագործության և անասնապահության կառուցվածքի բարելավմանը, ավելի ցածր բերքատու, քիչ արդյունավետ, ոչ եկամտաբեր կուլտուրաներն ավելի բերքատու, տվյալ բնական պայմաններում գյուղատնտեսական ավելի արժեքավոր կուլտուրաներով փոխարինելուն։

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործման պրոբլեմի ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն ունեն շրջանների նևրսում կոմպլեքսային զարգացման և տնտեսական շրջանների ու միութենական հանրապետությունների մասնագիտացման հարցերը։ Միաժամանակ, հեռանկարային պլանավորման ընթացքում, տնտեսական ներշրջանային կոմպլեքսային զարգացման հարցերի հետ միասին, հսկայական նշանակություն ունի աշխատանքի տերիտորյալ բաժանումը և միջճյուղային տնտեսական կապերի հարցը՝ ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ միջազգային մասշտաբով, հատկապես սոցիալիստական համագործակցության երկրների շրջանակներում։ Առանձին հանրապետություններում ժողովրդական տնտեսության և գյուղատնտեսության զարգացումն ու մասնագիտացումը հանգեցնում է աշխատանքի տերիտորիալ բաժանման խորացմանը, երկրի այլ շրջանների հետ տնտեսական կապերի ընդլայնմանը, որը նպաստում է հանրային աշխատանքի արտադրողականության բարձրացման գործին։ Այդ կապերի հետագա զարդացումն ու

6 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 45, էջ 138։

7 Նույն տեղում, հ. 22, էջ 77։

8 Նույն տեղում, էջ 64։

կատարելագործումը հնարավոր են դարձնում ավելի լրիվ և նպատակահարմար օգտագործել տեղական բնական պայմանները, տնտեսական հնարավորությունները և աշխատանքային ռեսուրսները։ Դրանով իսկ ապահովվում է հանրապետությունների և առանձին շրջանների առավել արդյունավետ մասնակցությունն ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման գործին։

Այսպիսով, առանձին հանրապետությունների գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավումն անմիջականորեն կապվում է հասարակական աշխատանքի բաժանման, նրա զարգացման ու խորացման հետ՝ Սովետական Միության ամբողջ տերիտորիայում։

Գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործման սկզբնական ցուցանիշներն են ցանքատարածությունների և անասունների գլխաքանակի կառուցվածքային փոփոխությունների տվյալները։ Շատ հատկանշական է նախահեղափոխական Ռուսաստանի և Սովետական Միության արդի ցանքատարածությունների կառուցվածքի համեմատությունը։ 1913 թ. ցարական Ռուսաստանի ընդհանուր ցանքատարածությունների մեջ, ներկա տերիտորիայում, հացահատիկի ցանքատարածությունների տեսակարար կշիռը կազմում էր 88,5 տոկոս, իսկ մնացած բոլոր կուլտուրաներինը՝ տեխնիկական, կերային, կարտոֆիլ և բանջարեղեն, ընդամենը 11,5 տոկոս։ Ներկայումս այդ կուլտուրաների տեսակարար կշիռը կազմում է մոտավորապես 40 տոկոս[9]։ Մոտավոր հաշվով այդ նույն համամասնությամբ փոփոխվել է Հայկական ՍՍՀ ցանքատարածությունների կառուցվածքը։ Հանրապետությունում դդալի չափով ավելացել են նաև բազմամյա տնկարքների տարածությունները։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ նկատելիորեն բարձրացել է խաղողի, պտուղների, բանջարեղենի ու տեխնիկական կուլտուրաների տեսակարար կշիռը։ Սրանում էլ արտահայտվում է հանրապետության գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործումը։

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավումը առաջին հերթին ծառայում է սննդամթերքների նկատմամբ բնակչության աճող պահանջները բավարարելու խնդրին։ Դա հանգեցնում է բնակչության մեկ շնչին ընկնող տրաադրանքի տարբեր տեսակների չափերի փոփոխությանը, հետևապես, ներգործում նաև սննդամթերքների սպառման կառուցվածքի վրա, նպաստում մարդու սննդի օրաբաժնի որակական տեղաշարժին, օգտագործվող մթերքների ասորտիմենտի բարելավմանն ու ընդլայնմանը։ Հենց դրանումն էլ արտահայտվում են այն դրական տեղաշարժերը, որ տեղի են ունենում գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի մեջ։ Այստեղ է, որ լրիվ բացահայտվում է նրա կատարելագործման էությունը և նշանակությունը, երևում են վերջնական արդյունքները։ Այստեղից էլ հետևում է եզրակացություն, որ քանի դեռ լրիվ չեն բավարարվում բնակչության բոլոր պահանջարկները սննդամթերքների նկատմամբ, գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործումը տեսք է ընթանա այնպես, որ համախառն արտադրանքի աճման տեմպերն դդալի չափով առաջ անցնեն բնակչության աճման տեմպերից։

Երկրում առատության հասնելու նպատակով, բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական մթերքների կարևորագույն տեսակների արտադրության

---

9 «Народное хозяйство СССР в 1959 г.», стр. 329; «Народное хозяйство СССР в 1968 г.», стр. 335.

գիտականորեն հիմնավորված անհրաժեշտ չափերի մասին մամուլում հրատարակված են համապատասխան տվյալներ. բնակչության մեկ շնչի հաշվով հարկավոր է արտադրել. հացահատիկ՝ 1000 կգ. շաքարի ճակնդեղ՝ 400, կարտոֆիլ՝ 650, բանջարեղեն՝ 160, պտուղներ և խաղող՝ 120—130, միս՝ 90, կաթ՝ 600 կգ, ձու՝ 360 հատ[10]։ 1968 թ. այդ պահանջը բավարարվել է. հացահատիկինը՝ 71,3 տոկոսով (պարենային հացահատիկինը՝ լրիվ), շաքարի ճակնդեղինը՝ 98,0, կարտոֆիլինը՝ 66,2, բանջարեղենինը՝ 50,0. պտուղներինն ու խաղողինը՝ 35,5, մսինը՝ 54,3, կաթինը՝ 57,5, ձվինը՝ 41,4 տոկոսով[11]։ Ժողովրդատնտեսական պահանջներից առավելապես ետ է մնում խաղողի, պտուղների, բանջարեղենի և անասնաբուծական մթերքների արտադրությունը։ Ուստի, գյուղատնտեսության արտադրության կառուցվածքի կատարելագործումը պետք է ընթանա համապատասխան ճյուղերի զարգացման տեմպերն արագացնելու, բնակչության մեկ շնչին ընկնող այդ մթերքների արտադրությունն ավելացնելու ուղիով։ Նման տենդենց վերջին 10—15 տարվա ընթացքում արդեն նկատվում է։ Այսպես, օրինակ, 1968 թ. 1951—1953 թթ. համեմատությամբ բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական համախառն արտադրանքը ՍՍՀՄ-ում ավելացավ 59 տոկոսով, այն դեպքում, երբ պտուղների համախառն արտադրանքը բարձրացավ ավելի քան երեք անգամ, մսինը՝ 65, կաթինը՝ 76, ձվինը՝ 93 տոկոսով։

Այսպիսով, երկրում, ամբողջությամբ վերցրած, գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները պետք է տեղի ունենան այնպես, որ բնակչության տարատեսակ սննդամթերքների սպառումը մոտենա գիտականորեն հիմնավորված չափերին, բարելավվի դրանց որակը և փոխվի սննդի կառուցվածքը՝ ի հաշիվ հացի ու կարտոֆիլի տեսակարար կշռի իջեցման։

Եթե երկրում, ամբողջությամբ վերցրած, գյուղատնտեսության զարգացման և նրա արտադրական կառուցվածքի բարելավման հիմնական խնդիրն է բնակչությանը լրիվ ապահովել անհրաժեշտ սննդամթերքներով, ապա առանձին հանրապետությունների համար այդ սկզբունքը պարտադիր չէ։ Այս խնդիրն ամենից առաջ լուծվում է Սովետական Միությունում աշխատանքի տերիտորիալ բաժանման զարգացման ու խորացման շնորհիվ։ Աշխատանքի հասարակական բաժանումը նպաստում և կանխորոշում է տեղական, բնական ու տնտեսական պայմանների լրիվ և նպատակահարմար օգտագործումը։

Երկրում կան շրջաններ, հատկապես ինդուստրիալ, որոնք զուրկ են գյուղատնտեսության արտադրության զարգացման համար համապատասխան պայմաններից։ Նման վայրերում տեղական գյուղատնտեսական արտադրությունը կարող է էական դեր չխաղալ սննդամթերքների նկատմամբ բնակչության աճող պահանջմունքները բավարարելու գործում։ Այդպիսի շրջանները գյուղատնտեսական բարիքներով ապահովվում են գլխավորապես ընդհանուր միութենական պարենամթերային ֆոնդերից։ Ինչ վերաբերում է հարավային հողագործության զոտիներին, որոնց թվին է պատկանում նաև Հայկական ՍՍՀ-ն, ապա բարենպաստ բնական պայմանները պարտավորեցնում են այդ զոտիներում գտնվող ճանապարհներին՝ ըստ ամենայնի ավելացնել ջերմասեր տեխ-

---

10 «Вопросы экономики», 1961, № 7, стр. 51.

11 Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1968 г.» վիճ. տարեգրքի 318, 320, 377 էջերում բերված տվյալներով։

նիկական կուլտուրաների, պտուղների, այդ թվում նաև մերձարևադարձային տնտեսությունների, խաղողի, թեյի արտադրությունը և ապահովել բնակչության մեկ շնչին բնկնող այդ մթերքների արտադրության աճը ամբողջ երկրի մասշտաբով:

Մասնագիտացման զարգացումը, նրա խորացումն այդ ուղղությամբ հանդիսանում է հենց վերոհիշյալ շրջանների գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործման չափանիշը։ Այսպես, օրինակ, միջինասիական հանրապետությունների մեծ մասի և Ադրբեջանական ՍՍՀ-ի համար գյուղատնտեսության բնագավառում հասարակական աշխատանքի բաժանման մեջ ունեցած մասնակցությունը դրսևորվում է ամենից առաջ, բամբակի, Վրացական ՍՍՀ-ում՝ թեյի և արևադարձային պտուղների արտադրության մեջ։ Մերձբալթյան հանրապետություններում, ՌՍՖՍՀ-ի մի շարք մարզերում ու շրջաններում, անասնաբուծության զարգացման համար բարենպաստ պայմաններ ունեցող մյուս հանրապետություններում գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը դրսևորվում է անասնաբուծության արտադրանքի, դիտավորապես մսի և կաթնամթերքների արտադրության տեսակարար կշիռը բարձրացնելու, բնակչության մեկ շնչին ընկնող այդ մթերքների արտադրության անշեղ աճման մեջ։

Գյուղատնտեսության արտադրության կառուցվածքի անընդհատ կատարելագործումը, որ արտահայտվում է բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշով և արտադրանքի որոշ տեսակների արտադրության առավել աճով, նկատվում է նաև Հայկական ՍՍՀ-ում։ Գյուղատնտեսական մթերքների այդ խմբին պատկանում են՝ խաղողը, պտուղները և բանջարեղենը։ Դրանց արտադրությունը, որոշելով հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացումը, ծառայում է ինչպես տեղական բնակչության պահանջարկը պտուղ-բանջարեղենով ապահովելու գործին, այնպես էլ՝ արտահանման նպատակին, առավելապես վերամշակված վիճակում։ Դրանով իսկ ապահովվում է հանրապետության ակտիվ մասնակցությունը գյուղատնտեսական արտադրության ոլորտում աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման ասպարեզում։

Բացի վերը նշված մթերքներից, Հայկական ՍՍՀ-ում պետք է ավելանա նաև մեկ շնչի հաշվով կաթի արտադրությունը՝ որպեսզի ապահովվի թարմ կաթնամթերքի սպառման գիտականորեն հիմնավորված նորման։

Ինչ վերաբերվում է գյուղատնտեսական այն մթերքներին, որոնցով հանրապետության ապահովվածությունը շատ ցածր է, օրինակ, հացահատիկը կամ շարարի ճակնդեղը (մեկ շնչի հաշվով համապատասխանորեն 7 և 8 անգամ քիչ է արտադրվում, քան երկրում ամբողջությամբ վերցրած), ապա այդ մթերքների արտադրության ավելացման լուրջ տեղաշարժեր դժվար է սպասել նաև հեռանկարում։

Ելնելով այս դրույթներից, Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության զարգացման ու արտադրական կառուցվածքի կատարելագործման հիմնական խնդիրները կարելի է ձևակերպել հետևյալ երեք կետերով.

1. Մասնակցություն գյուղատնտեսության մեջ աշխատանքի տերիտորիալ բաժանմանը՝ այն հաշվով, որ Սովետական Միության մյուս շրջանների հետ միասին, ապահովվի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի անհրաժեշտ համաչափություն և երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության օպտիմալ համամասնություն։

2. Տեղի բնական և տնտեսական պայմանների լրիվ և առավել արդյունավետ օգտագործում, որն ամենից առաջ պետք է արտահայտվի միութենական նշանակություն ունեցող և հանրապետության մասնագիտացման ուղղությունը բնորոշող ճյուղերի՝ խաղողագործության և պտղաբուծության, առավելագույն զարգացումն ապահովելու մեջ։

3. Երևանի և մյուս խոշոր քաղաքների ու արդյունաբերական կենտրոնների մերձքաղաքային գոտիների մասնագիտացման ու զարգացման միջոցով առաջիկա տարիների ընթացքում պետք է քաղաքային բնակչությունը լրիվ բավարարվի մերձքաղաքային տնտեսության մթերքներով, առաջին հերթին՝ կաթնամթերքով ու բանջարեղենով։

Գյուղատնտեսության արտադրական կառուցվածքի կատարելագործումը պետք է իրականացվի առավելագույն տնտեսական արդյունավետության ուղիով, այն է՝ մշակվող հողատարածության մեկ միավորից ստանալ ամենաբարձր հատույցը՝ աշխատանքային և նյութական նվազագույն ծախսումով։ ՍՄԿԿ ծրագրում հարցը դրվում է հենց այսպես՝ հեռանկարում գյուղատնտեսության տեղաբաշխումը պետք է իրագործել ըստ բնատնտեսական գոտիների և շրջանների, ավելացնելով առավելապես գյուղատնտեսական արտադրանքի այն տեսակների արտադրությունը, որոնց համար լավագույն պայմաններ կան և ավելի քիչ ծախսեր են պահանջում։

Այսպիսով, գյուղատնտեսության մասնագիտացման տնտեսական արդյունավետության և ճյուղային կառուցվածքի կատարելագործման գլխավոր չափանիշը կլինի հողատարածությունների յուրաքանչյուր հեկտարից առավելագույն արդյունք ստանալ աշխատանքի և միջոցների նվազագույն ծախսումներով։ Ըստ որում, քանի որ բնակչության պահանջմունքները գյուղատնտեսական մթերքներով լրիվ չափով չեն ապահովվում, ապա երկրի համար, ամբողջությամբ վերցրած, վերոհիշյալ սահմանումը կարելի է լրացնել հետևյալ պայմանով, այն է՝ եթե միաժամանակ լուծվի նաև բնակչության գյուղատնտեսական մթերքների բոլոր հիմնական պահանջմունքների առավել լրիվ չափով բավարարելու խնդիրը (կամ լուրջ քայլ կատարվի դրան հասնելու համար), ձեռք բերվի գյուղատնտեսության և ամբողջ ժողովրդական տնտեսության նյուղային կառուցվածքի օպտիմալ համամասնություն։

Սովետական Միության համար, ամբողջությամբ վերցրած, գոյություն ունի գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության միասնական ցուցանիշների սիստեմ։ Առանձին հանրապետություններում, ելնելով բնական պայմանների առանձնահատկություններից և գյուղատնտեսության առջև դրված խնդիրներից, կարելի է օգտագործել տվյալ շրջանի համար նախատեսվող զարգացման տնտեսական արդյունավետությունն արտահայտող ցուցանիշների մի ամբողջ շարք։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության հեռանկարային զարգացման ու արտադրական կառուցվածքի կատարելագործման տնտեսական արդյունավետության համար բնորոշ ցուցանիշներն են. 1. Բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական մթերքների արտադրության և տեղում արտադրվող սննդամթերքներով բնակչության ապահովվածության բարձրացումը, 2. գյուղատնտեսական մթերքների արտադրության բարձրացումը՝ հողատարածությունների մեկ միավորի հաշվով, 3. գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխության հաշվին ստացվող համախառն արտադրանքի աճը, 4. պարենային

ապրանքների միջհանրապետական ապրանքաշրջանառության (ներմուծում և արտահանում) ծավալի ընդլայնումը և կառուցվածքի փոփոխությունը։

Այստեղ մենք կսահմանափակվենք մեջ բերելով տնտեսական արդյունավետության միայն մի ցուցանիշ՝ Հյուղային կառուցվածքի կատարելագործման շնորհիվ ստացված արդյունքը։ Այդ ցուցանիշը վկայում է, որ ինչքան բարձր է համախառն արտադրանքի աճը՝ կառուցվածքային փոփոխության հաշվին, այնքան բարձր է գյուղատնտեսության զարգացման արդյունավետությունը։ Հարմարության համար հիմք է վերցված բուսաբուծության արտադրանքի նախատեսվող զարգացումը մոտակա 15 տարվա ընթացքում։ Ըստ մոտավոր հաշվարկումների, այդ ժամանակաշրջանում, 100 հեկտարի հաշվով, բուսաբուծության արտադրանքի ընդհանուր աճը կկազմի մոտ 70 հազ. ռուբ., որից 30 հազ. ռուբլուց ավելին կդոյանա հողագործության կառուցվածքային փոփոխությունների հաշվին։ Այս թվերը վկայում են գյուղատնտեսության մեջ ընդլայնված վերարտադրության և հանրապետության հողային ֆոնդի արդյունավետ օգտագործման համար գյուղատնտեսական արտադրանքի արտադրական կառուցվածքի կատարելագործման բարելավման հսկայական նշանակությունը։

ՕՄԿԿ Կենտկոմի հուլիսյան (1970) պլենումն իր որոշման մեջ մատնանշեց, որ նյութատեխնիկական բազայի բավական ամրապնդման հիման վրա գյուղատնտեսության առավել արագ զարգացումը մոտակա ժամանակաշրջանի գլխավոր և առաջնահերթ խնդիրներից մեկն է։ Պլենումը նշանագծեց երկրում գյուղատնտեսական բոլոր հիմնական մթերքների արտադրության լայն աճ։ Այն պետք է էլ ավելի բարձրացնի բնակչության ապահովվածությունը գյուղատնտեսության մթերքներով և բարձրացնի գյուղի աշխատավորների նյութական բարեկեցությունը։

РОЛЬ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ОТРАСЛЕВОЙ СТРУКТУРЫ— В РАСШИРЕННОМ ВОСПРОИЗВОДСТВЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

О. Х. КАРЧИКЯН

Резюме

Одним из важных вопросов проблемы расширенного воспроизводства в сельском хозяйстве является вопрос совершенствования его производственной структуры.

В статье раскрывается большое значение улучшения отраслевой структуры для социалистического сельского хозяйства. Выявляется его непосредственная связь с такими экономическими проблемами, как пропорциональность развития, специализация и концентрация производства, интенсификация, территориальное разделение труда в области сельского хозяйства и др. Анализируется прошедший этап и дается направление дальнейшего развития и совершенствования отраслевой структуры сельского хозяйства Армянской ССР, рассматриваются его особенности, связанные с природно-экономическими условиями республики. Делается попытка определить критерий экономической эффективности совершенствования структуры сельскохозяйственного производства для страны в целом, а также для отдельных союзных республик.